

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**պայմանագիր կնքելու որոշման մասին**

Սույն հայտարարությունը հրապարակվում է «11» Դեկտեմբերի 2020թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների հիմքով և սահմանված նպատակներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է **«Կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար Վեբ կիրառության հրապատ (Web Application Firewall) ձեռք բերելու նպատակով կազմակերպության ընտրության գնանշման հարցման»** ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ամփոփ տեղեկատվությունը:

Գնանշման հարցմանը մասնակցել է չորս կազմակերպություն՝

1. **«Կիբերսեկ» ՍՊԸ**
2. **«ԼԱԲ-64» ՍՊԸ**
3. **«Յունիքոմփ» ՓԲԸ**
4. **«Լանար Սերվիս» ՍՊԸ**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտերով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «10» Դեկտեմբերի 2020թ. նիստի ընթացքում ամփոփվել են վերը նշված գնանշման հարցման արդյունքները և հաղթող մասնակից է ճանաչվել **«Լանար Սերվիս» ՍՊԸ-ն:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օր ընկած ժամանակահատվածը:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար  
Վահագն Խաչատրյան

**Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ**